



ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ-ի American Express® Blue Զարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմաններ

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ-ի American Express® Blue Զարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) ներկայացնում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի և Ինթերնեյշնլ ՍՈՍ Ասիստանս ընկերության միջև կնքված ճանապարհորդության ապահովագրության Պայմանագրի պայմանները:

Ուժի մեջ է՝ 15.10.2017-ից

Բովանդակություն

Մաս 1	Ապահովագրության Պայմաններ
Մաս 2	Սահմանումներ
Մաս 3	Աշխարհագրական սահմանափակումներ
Մաս 4	Իրավասություն
Մաս 5	Ապահովագրության գործողության ժամկետ
Մաս 6	Բժշկական և ճանապարհորդական աջակցության ծառայություններ
Մաս 7	Գնումների ապահովագրություն
Մաս 8	Բացառություններ՝ կիրառելի Մաս 11-ի համար
Մաս 9	Ընդհանուր պայմաններ
Մաս 10	Ընդհանուր բացառություններ
Մաս 11	Չեղծարարություններից ապահովագրություն
Մաս 12	Շտապ բժշկական և ճանապարհորդական աջակցություն ստանալու կարգը
Մաս 13	Հայտերի ներկայացման կարգը
Հավելված 1	Ապահովագրական ծածկույթների, հատուցման սահմանաչափերի և չհատուցվող գումարների աղյուսակ

Մաս 1 Ապահովագրության պայմաններ

1.1. Պայմանները ներառում է յուրաքանչյուր American Express Blue Զարտատիրոջը տրամադրվող Ապահովագրական ծածկույթի մանրամասները, կանոնները, պայմաններն ու բացառությունները: Բոլոր հայտերը կարգավորվում են Պայմանների հիման վրա:

1.2. Զարտատերն իրավասու է ապահովագրության Պայմանների գործողության ժամկետում և աշխարհագրական սահմաններում ստանալ հատուցում Պայմանների ներքո առաջարկվող ապահովագրական ծառայություններից՝ համաձայն Պայմանների կանոնների, պայմանների և բացառությունների:

1.3. Ապահովագրական ծածկույթը սահմանված է «Լյուդս» ապահովագրական ընկերության կողմից:

1.4. Ապահովագրական ծառայությունները մատուցվում կամ կազմակերպվում են «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից: Որոշ դեպքերում, երբ «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է օժանդակության ծառայությունների մատուցումը, այդ ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Զարտատիրոջ կողմից՝ վերջինիս սեփական միջոցների հաշվին:

1.5. Պայմանները կազմված է և կարգավորվում է ՀՀ օրենսդրության համաձայն: Պայմանների շրջանակներում առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների արդյունքում փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մաս 2 Սահմանումներ

Ապահովագրական ծածկույթ է համարվում ապահովագրական ընկե-

րության կողմից Պայմաններով իրականացվող ապահովագրությունը, որի շրջանակներում իրականացվում են ապահովագրական հատուցումները:

Մարմնական վնասվածք է համարվում Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած ճանաչելի ֆիզիկական վնասվածքը:

Զարտ է համարվում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից Զարտատիրոջ համար պատվիրված American Express Blue Զարտը:

Զարտատեր է համարվում ցանկացած անձ, ով ունի վավեր Զարտ, ում տարիքը չի գերազանցում 76 (յոթանասունվեց) տարեկանը և ներառում է նաև ցանկացած Ընտանիքի անդամ, ովքեր ճանապարհորդում են միասին նրա Հիմնական բնակության երկրից՝ նախօրոք ամրագրված տոմսերով:

Պայմաններ համարվում է ապահովագրության սույն պայմանները:

Հանրային փոխադրամիջոց է համարվում կանոնավոր կամ չարտերային ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արտոնագիր ունեցող փոխադրողի կողմից շահագործվող ցանկացած հանրային ցամաքային, երկաթուղային, ջրային կամ օդային տրանսպորտային միջոց:

Բանկ է համարվում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Ձախողում է համարվում ցանկացած կողմի պարտավորությունների խախտումը կամ ցանկացած գործողություն, բացթողում, անփութություն, որը թույլ է տրվել կողմերից մեկի, նրա աշխատակիցների, գործակալների կամ գործընկերների կողմից, և որի արդյունքում առաջանում է մեղավոր կողմի պատասխանատվությունը մյուս կողմի առջև:

Խնամակալության տակ գտնվող երեխաներ են համարվում Զարտատիրոջ հարազատ, խորթ և իրավաբանորեն ճանաչված երեխաները, ովքեր՝

ա) ամուսնացած չեն և

բ) ապրում են Զարտատիրոջ հետ (բացառությամբ՝ առկա ուսուցում ստանալու ընթացքում այլ տեղում բնակվողներին) և

գ) մինչև 19 տարեկան են (կամ մինչև 24 տարեկան՝ առկա ուսուցում ստանալու դեպքում)

Անդամալուծում է համարվում վերջույթի կորուստը, ինչպես նաև վերջույթի աշխատունակության կորուստը կամ աչքի(երի) կորուստը՝ ներառյալ տեսողության ամբողջական և անվերականգնելի կորուստը, որն ի հայտ է եկել Դժբախտ պատահարից հետո 12 (տասներկու) ամիսների ընթացքում:

Տեղական հանրային փոխադրամիջոց է համարվում կանոնավոր կամ չարտերային ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արտոնագիր ունեցող փոխադրողի կողմից շահագործվող տեղական ցանկացած հանրային ցամաքային, երկաթուղային, ջրային կամ օդային տրանսպորտային միջոց:

Պայմանների գործողության սկզբնաժամկետ է համարվում 2017 թվականի հոկտեմբերի 15-ը:

Պայմանների գործողության վերջնաժամկետ է համարվում 2018 թվականի հոկտեմբերի 14-ը ներառյալ:

Հիվանդություն է համարվում առողջության ցանկացած հանկարծակի և անսպասելի վատթարացումը, որը հաստատվում է համապատասխան բուժաստատության կողմից տրված փաստաթղթով և ընդունվում է «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության բժիշկների կողմից:

Ոսկերչական և թանկարժեք իրեր են համարվում ոսկուց, արծաթից, թանկարժեք մետաղներից կամ կիսաթանկարժեք քարերից պատրաստված իրերը, մորթյա իրեր, արվեստի գործեր և լուսանկարչական սարքավորումներ:

Ճանապարհորդություն է համարվում

մինչև 90 (իննսուն) օր ժամկետով ուղևորությունը Զարտատիրոջ հիմնական բնակության երկրից դուրս՝ պայմանով, որ սենյակը նախապես պատվիրված է առնվազն երկու գիշերվա համար. նախապատվիրումը պետք է լինի ապահովագրության գործողության ժամկետների ընթացքում: Ճանապարհորդությունը համարվում է սկսված, երբ Զարտատերը լքում է տունը, որտեղ սովորաբար բնակվում է, և համարվում է ավարտված Զարտատիրոջ տուն հասնելուն պես:

Վերջույթի կորուստ է համարվում ձեռքի դաստակի մակարդակին կամ դրանից վերև, ինչպես նաև ոտքի կոճի մակարդակին կամ դրանից վերև ֆիզիկական բաժանման միջոցով դրա մշտական կորուստը և ներառում է ձեռքի, բազկի կամ ոտքի մշտական ամբողջական և անվերականգնելի կորուստը:

Հատուցման սահմանաչափ է համարվում այն առավելագույն գումարը, որի սահմաններում Ապահովագրական ընկերությունը պատասխանատվություն է կրում Պայմաններով սահմանված և ցանկացած Զարտատիրոջ հետ Պայմաններով նախատեսված պատահարի տեղի ունենալու դեպքում:

Բժշկական ծախսեր են համարվում բոլոր ողջամիտ և անհրաժեշտաբար կատարված ծախսերը, որոնք առաջացել են Զարտատիրոջ Հիմնական բնակության երկրից դուրս՝ հիվանդանոցային, վիրաբուժական, դիագնոստիկ կամ այլ բուժումների իրականացման համար, որը ցուցվել և նշանակվել է որակավորված բժիշկ-մասնագետի կողմից:

Խորհրդավոր անհետացում է համարվում գնված ապրանքի անբացատրելի եղանակով անհետացումը, երբ որևէ իրական փաստի կամ անձի կողմից կատարված սխալի առկայություն չկա:

Դրամ է համարվում մետաղադրամները, թղթադրամները, փոստային դրամական փոխանցումների բլանկները, ստորագրված ճանապարհորդային

և այլ չեկերը, ակրեդիտիվները, ճանապարհորդական տոմսերը, վճարային քարտերը, բենզինի այլ չեկերը:

Կողմ է համարվում Ապահովագրական ընկերության և Բանկի միջև կնքված ապահովագրության պայմանագրի յուրաքանչյուր կողմը:

Ապահովագրության ժամանակահատված է համարվում ապահովագրության գործողության սկզբնաժամկետի և վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածը:

Հիմնական բնակության երկիր է համարվում այն երկիրը, որտեղ Զարտատերն ունի իր հիմնական բնակության վայրը: Սույն ապահովագրության իրականացման ժամանակ Զարտատիրոջ ամենամոտ հարազատների քաղաքացիությամբ որոշվում է Զարտատիրոջ քաղաքացիությունը: Երկքաղաքացիության դեպքում Զարտատիրոջ քաղաքացիությունը որոշվում է՝ հիմք ընդունելով իր հիմնական բնակության երկրի քաղաքացիությունը սույն ապահովագրության իրականացման ընթացքում:

Ծառայություններ են համարվում 24-ժամյա աջակցության և այլ շտապ օգնության հետ կապված ծառայությունները, որոնք տրամադրվում են «Ինթերնեյշնլ ՍՌՍ» ընկերության կողմից:

Գողացված է համարվում Ապահովագրված գնման անհետացումը կամ կորուստը, որը կատարվել է հայտնի վայրից և այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ենթադրում են գողության հավանականություն:

Ապահովագրված գնում է համարվում իրը, որը գնվել է Զարտատիրոջ կողմից և որի համար վճարվել է Զարտով: Որպեսզի գնումը համարվի ապահովագրված, գնման ողջ գումարը պետք է ամբողջովին վճարված լինի Զարտով:

«Ինթերնեյշնլ ՍՌՍ» ընկերություն է համարվում Ինթերնեյշնլ ՍՌՍ Անիստանս 24 ընկերությունը, հասցե՝

ՌԴ, Մոսկվա, 129 226, Դոկուկինա 16/1, 4-րդ հարկ:

«Ինթերնեյշնլ ՍՌՍ» ընկերության բժիշկներ է համարվում այն անձը, ով առաջինն է արձագանքում ճանապարհորդության ընթացքում առողջության հանկարծակի կամ անսպասելի վատթարացման ժամանակ և ով երաշխավորված է որպես որակավորված բժիշկ և համաձայնեցված է Ինթերնեյշնլ ՍՌՍ-ի ահազանգերի կետորոնի հետ:

Քրոուֆորդ և Ընկերություն է համարվում Քրոուֆորդ և Ընկերությունը, հասցե՝ ՌԴ, Մոսկվա 115 035, Սադովնիչեսկայա 24, 3-րդ շենք:

Ապահովագրական ընկերություն են համարվում Լոնդոնի Լոյդսի անդերռայթերը:

Մաս 3 Աշխարհագրական սահմանափակումներ

3.1. Պայմաններով տրամադրվող Ապահովագրական ծածկույթը գործում է ամբողջ աշխարհում, իսկ ճանապարհորդության հետ կապ ունեցող ապահովագրական ծառայությունները՝ արտասահմանում գտնվելիս:

Մաս 4 Իրավասություն

4.1. Սույն ապահովագրությամբ տրամադրվող ծածկույթից իրավունք ունեն օգտվելու միայն այն Զարտատերերը, ում տարիքը Պայմանների գործողության սկզբնաժամկետում չի գերազանցում 76 տարեկանը:

4.2. Զարտատերն իրավունք ունի օգտվելու Ապահովագրական ծածկույթից՝ համաձայն Պայմանների կամ ցանկացած այլ չափանիշների, որոնք սահմանվել են Բանկի կողմից և ամրագրվել «Ինթերնեյշնլ ՍՌՍ» ընկերության հետ կնքված պայմանագրում:

4.3. Զարտատիրոջը տրամադրվող ապահովագրական ծածկույթը գործում է պարտադիր ներառման սկզբունքով:

Մաս 5 Ապահովագրության գործողության ժամկետ

5.1. Ապահովագրությունն ուժի մեջ է Պայմանների գործողության սկզբնա-
ժամկետից և գործում է մինչև
Պայմանների գործողության վերջնա-
ժամկետը:

5.2. 5.1 կետում նշված ժամկետի
ավարտից հետո Պայմաններն
երկարաձգված է համարվում ևս
1 (մեկ) տարի ժամկետով, եթե
Բանկի կողմից Զարտատիրոջը
նախապես չի տեղեկացվում Բանկի և
Ապահովագրական ընկերության միջև
կնքված պայմանագիրը լուծելու կամ
փոփոխելու մասին: Նշված կարգը
գործում է նաև յուրաքանչյուր հաջորդ
տարվա համար:

5.3. Բանկի և Ապահովագրական
ընկերության միջև կնքված պայմա-
նագիրը լուծելու կամ փոփոխելու
դեպքում Բանկը առնվազն 1 (մեկ)
ամիս առաջ առձեռն, փոստային
կամ էլեկտրոնային տարբերակով
տեղեկացնում է Զարտատիրոջը:

5.4. Բոլոր Զարտատերերն իրա-
վունք են ստանում օգտվելու ապա-
հովագրական ծածկույթից իրենց
քարտային հաշվի ակտիվացման
պահից:

5.5. Ապահովագրական ծածկույթից
օգտվելու Զարտատիրոջ իրավունքը
դադարում է ստորև նշված հանգա-
մանքներից ցանկացածի ի հայտ գալու
դեպքում`

ա) Պայմանների համաձայն՝ Զար-
տատերն այլևս իրավունք չունի
օգտվելու Ապահովագրական ծած-
կույթից

բ) Պայմանների գործողության
ժամկետը դադարելու կամ ավար-

տվելու օրվանից՝ անկախ այն
փաստից, թե նշված հանգա-
մանքներից որևէ առաջինը տեղի
կունենա:

Մաս 6 Բժշկական և ճանապարհորդական աջակցության ծառայություններ

6.1. Աջակցության ծառայություններ

«Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը
տրամադրում է տարբեր բժշկական և
ճանապարհորդական աջակցության
ծառայություններ: «Ինթերնեյշնլ ՍՈՍ»
ընկերության կողմից տրամադրվող
այդ ծառայությունները սահմանված
են Պայմաններով: Այն դեպքերում, երբ
նման ծառայությունների տրամադրման
համար ներգրավվում է որևէ երրորդ
կողմ, ինչպես օրինակ՝ սուրհանդակ
կամ բժիշկ, այդ լրացուցիչ ծախսերը
հոգում է Զարտատերը:

6.1.1 Հեռախոսային աջակցություն

«Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հետ
հեռախոսով կապ հաստատելու դեպ-
քում Զարտատիրոջը կտրամադրվի
բժշկական խորհրդատվություն՝ ներառ-
յալ ճանապարհորդության համար
պահանջվող պատվաստումների վերա-
բերյալ տեղեկատվություն: «Ինթերնեյշնլ
ՍՈՍ» ընկերությունը նաև կտրամա-
դրի տեղեկատվություն ճանապարհոր-
դական վիզաների վերաբերյալ: Պետք
է նկատի ունենալ, որ ցանկացած
նման խորհուրդ անխուսափելիորեն
սահմանափակ է՝ կախված որոշակի
հանգամանքներից և «Ինթերնեյշնլ
ՍՈՍ» ընկերությունը չի կարող կրել
պատասխանատվություն սխալների
համար:

6.1.2 Ուղղորդում դեպի Ծառայություն մատուցողները

«Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հետ
հեռախոսով կապ հաստատելու
դեպքում Զարտատիրոջը կտրամա-
դրվի բժշկական և իրավաբանական
ծառայություններ մատուցողների՝

ներառյալ բժիշկների, ատամնաբույժների, իրավաբանների, իրավախորհրդատուների, թարգմանիչների, հիվանդանոցների և այլ համապատասխան անձանց և հաստատությունների կոնտակտային տվյալներ: Այսպիսի դեպքերում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը ցուցաբերում է առանձնահատուկ զգուշություն և ուշադրություն ծառայություններ մատուցողների ընտրության հարցում, որից հետո միայն տրամադրում անհրաժեշտ խորհուրդ և պատասխանատվություն չի կրում տրամադրված խորհուրդների և վերջիններիս արդյունքում առաջ եկած հետևանքների համար: Ընդ որում, եթե անհրաժեշտ ծառայություն մատուցող երրորդ կողմի ծախսերը չեն հատուցվում Պայմաններով, դրանց վճարումը կատարվում է Զարտատիրոջ կողմից:

6.1.3 Բժշկական մոնիտորինգ

Զարտատիրոջ հոսպիտալացման դեպքում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը անհրաժեշտության դեպքում կվերահսկի Զարտատիրոջ բուժման գործընթացը հոսպիտալացման ընթացքում և դրանից հետո՝ մինչև վերջինիս առողջական վիճակի վերականգնումը:

6.1.4 Վճարման երաշխավորություն

Պայմաններով սահմանված դեպքերում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կերաշխավորի կամ կվճարի ցանկացած հոսպիտալացման դեպոզիտային վճար Զարտատիրոջ անունից:

6.1.5 Երրորդ կողմի Ծառայություններ

Շտապ բուժօգնության անհրաժեշտության դեպքում, երբ հեռախոսով հնարավոր չէ համարժեքորեն գնահատել Զարտատիրոջ վիճակը հնարավոր տեղափոխման համար, կամ Զարտատերը չի կարող տեղաշարժվել և տեղական բուժօգնության ցուցաբերումը հնարավոր չէ, «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը Զարտատիրոջ մոտ է ուղարկում համապատասխան բժիշկ: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության

կողմից չի վճարվում այս ծառայության համար:

6.1.6 Դեղորայքների մատակարարում

«Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է Զարտատիրոջ բուժօգնության կամ խնամքի համար անհրաժեշտ դեղորայքի, բժշկական պարագաների և սարքավորումների մատակարարումը Զարտատիրոջը, եթե դրանք հասանելի չեն Զարտատիրոջ գտնվելու վայրում: Նման դեղորայքների և բժշկական սարքավորումների մատակարարումը պետք է համապատասխանի տվյալ տեղանքի օրենսդրությանը և կարգավորվի դրանով: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը չի վճարում նման դեղորայքների և բժշկական սարքավորումների, ինչպես նաև դրանց մատակարարման ծախսերը:

Մաս 7 Գնումների ապահովագրություն

7.1. Համաձայն Պայմանների Հավելված 1-ով նախատեսված ծածկույթի՝ եթե ապահովագրված գնումը կամ նվեր տրված ապահովագրված գնումը գողացվում կամ վնասվում է, Ապահովագրական ընկերությունը փոխհատուցում է Զարտատիրոջը կրած կորուստների դիմաց:

7.2. Կորուստները պիտի ի հայտ գան գնման Ապահովագրումից 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում: Ապահովագրված գնման որևէ գրանցում անհրաժեշտ չէ:

7.3. Սույն ծածկույթի գծով սահմանված է ոչ պայմանական չհատուցվող գումար՝ 50 (հիսուն) ԱՄՆ դոլար յուրաքանչյուր և ամեն դեպքի համար: Ապահովագրությունը տարածվում է միայն այն գումարների մասով, որոնք ապահովագրված չեն որևէ այլ ապահովագրությամբ կամ հատուցման ծրագրով և կարող է

լինել առավելագույնը գնման իրական գումարի չափով:

7.4. Ապահովագրական ընկերությունը պատասխանատու չէ այնպիսի գումարների համար, որոնք ավելի են՝

1) գործող հաշվում արտացոլված Ապահովագրված գնման գումարից,

2) ապահովագրված գնման վերանորոգման կամ համարժեք, նմանատիպ և նույն որակական հատկանիշներ ունեցող ապրանքով փոխարինման իրական արժեքից:

7.5. Ապահովագրված գնման մի քանի մասից բաղկացած լինելու դեպքում Ապահովագրական ընկերության պարտավորությունը հանդիսանում է վճարել միայն գողացված կամ վնասված մասի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս մասերը պիտանի չեն և չեն կարող փոխարինվել առանձին: Ոսկերչական և արվեստի գործերի դեպքում, որոնք բաղկացած են հավաքածուներից կամ զույգերով են, պարտավորությունը չի կարող լինել ավելին, քան գողացված կամ վնասված առանձին մասի արժեքն է՝ անկախ նրանից, թե նման մասը համամասնության հետ ինչ ընդհանուր հատուկ արժեք է ներկայացնում:

Մաս 8 Բացառություններ՝ կիրառելի Մաս 7-ի համար

8.1. Գնումների ապահովագրությունը չի ներառում հետևյալը.

ա) նավեր,

բ) մոտորացված տրանսպորտային միջոցներ (ներառյալ, բայց ոչ սահմանափակված ինքնաթիռներով, ավտոմեքենաներով, կցասայլակներով, ծածկասայլակներով, քարշակներով, մոտոցիկլետներով) և նրանց շարժիչներ, սարքավորումներ և աքսեսուարներ (ներառյալ, բայց ոչ սահմանափակված հաղորդակցման

սարքավորումներով, որոնք նախատեսված են միայն տրանսպորտային միջոցում կիրառելու համար),

գ) հողատարածք կամ շինություն (ներառյալ, բայց ոչ սահմանափակված տներով և բնակարաններով),

դ) ճանապարհային չեկեր, ցանկացած տեսակի տոմսեր, սակարկելի գործիքներ, ներդրումներ, ոսկու ձուլակտորներ, հազվագյուտ կամ թանկարժեք մետաղադրամներ, կանխիկ գումար կամ դրա համարժեքներ

ե) կենդանիներ կամ բույսեր

զ) կենցաղային ապրանքներ և արագ փչացող ապրանքներ

է) իրեր, որոնք վնասվում են փոփոխություն կատարելու միջոցով (ներառյալ կտրում, սղոցում, ձևավորում),

ը) ծառայություններ (ներառյալ, բայց ոչ սահմանափակված Զարտատիրոջ կողմից վերանորոգման կամ վարձու աշխատանքով տեխնիկական զննմամբ, ապրանքների, արտադրանքի ու գույքի ներդնմամբ ու վերանորոգմամբ, ցանկացած տիպի մասնագիտական խորհրդատվությամբ):

8.2. Ուղեբեռում եղած ոսկեղենի, տեսախցիկների կամ վիդեո ձայնագրիչ սարքավորումների գողությունը կամ վնասումը ապահովագրված չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Զարտատերը կրում է վերոնշյալ իրերը ձեռքում կամ դրանք գտնվում են Զարտատիրոջ կամ նրան ծանոթ ուղեկցի անձնական հսկողության տակ:

8.3. Ապահովագրական ծածկույթը չի տրամադրվի այնպիսի գողությունների կամ վնասների դեպքում, որոնք առաջացել են գեղծարարության, չարաշահման, մաշվածության, աստիճանական վատթարացման, ուտիճների, տգերի, գործարանային թերությունների, պատերազմի կամ ցանկացած տեսակի

պատերազմական դրության (ներառյալ ներխուժումներ, ապստամբություններ և իրարանցում), ցանկացած տեսակի պատերազմային զենքի, որը կրում է ատոմային կամ ռադիոակտիվ ուժ (անկախ պատերազմային իրավիճակի առկայությունից և դրա կառավարման աստիճանից, ինչպես նաև միջադեպի հետ ունեցած կապի առկայությունից կամ բացակայությունից), կառավարության, մաքսատան կամ պետական այլ մարմինների կողմից բռնագրավման, անօրինական գործունեության ի հայտ գալու, մաքսանենգության, ֆորս-մաժորային իրավիճակների (ներառյալ երկրաշարժ, ջրհեղեղ կամ մրրիկներ), ունեցվածքը հասարակական փոխադրողների խնամքին, ուշադրությանը և կառավարմանը հանձնելու պատճառներով:

8.4. Ապահովագրական ծածկույթը չի տրամադրվում այնպիսի գոգությունների կամ վնասների համար, երբ Զարտատերը չի ձեռնարկում Պատշաճ ջանասիրություն՝ Ապահովագրված գնման կորուստից կամ վնասումից խուսափելու համար:

8.5. Հասարակական վայրերից գողացված իրերն ապահովագրված չեն, եթե դրանք փակված չեն հանգամանքների թույլտվությամբ առկա վայրերում:

8.6. Գողացված իրերը չեն ապահովագրվում, եթե դրանց գողության մասին 36 (երեսուներեք) ժամվա ընթացքում չի տեղեկացվում ոստիկանությանը կամ համապատասխան հաստատությանը, որտեղ տեղի է ունեցել միջադեպը:

8.7. Չհսկվող և անպաշտպան տրանսպորտային միջոցներից գողացված իրերը ապահովագրված չեն:

Մաս 9 Ընդհանուր պայմաններ

9.1. Կորուստները, գողությունը, վնասները, պատահարները, Մարմա-

կան վնասվածքները կամ Հիվանդությունները կանխելու, իր անձնական սեփականությունը պահպանելու և/կամ վերականգնելու նպատակով Զարտատերը պետք է ցուցաբերի համապատասխան զգուշություն:

9.2. «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը գործադրում է առավելագույն ջանքերը Պայմաններով սահմանված Ապահովագրական ծածկույթի տրամադրման ուղղությամբ՝ բացառությամբ ցանկացած օգնության և միջամտության, որոնք կախված են տեղային հասանելիությունից և պարտավոր են ենթարկվել տեղական և միջազգային օրենքներին, որոնց միջամտությունը կախված է «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից տարբեր հաստատություններից համապատասխան թույլտվություններ և հաստատումներ ստանալուց: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը պարտավորված չէ տրամադրել Ապահովագրական ծածկույթով սահմանված ծառայություններ այն Զարտատերերին, որոնք «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության միակողմանի կարծիքով գտնվում են այնպիսի վայրերում, որոնք հանդիսանում են պատերազմական ռիսկային գոտի, ստեղծում են քաղաքական և այլ այնպիսի պայմաններ, որոնք դարձնում են նման ծառայությունները անհնար կամ պատճառաբանված անիրագործելի:

9.3. Ցանկացած պատահարի, արարքի կամ այնպիսի իրադարձության մասին, որը կարող է ապահովագրական հայցի հիմք հանդիսանալ, պետք է գրավոր ծանուցել Ապահովագրական ընկերությանը պատահարի տեղի ունենալուց հետո 30 (երեսու) օրվա ընթացքում կամ պատճառաբանված խելամիտ ժամկետում, իսկ զեղծարարության դեմ ապահովագրական ծառայություններից օգուվելու համար պատահարի մասին պետք է տեղակ պահել Ապահովագրական ընկերությանը զեղծարար գործարքների կատարումից առավելագույնը 72

(յոթանասուներկու) ժամվա ընթացքում: Բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, փաստերը և վկայությունները, որոնք պահանջվում են Ապահովագրական ընկերության կողմից, պետք է վերջինիս տրամադրվեն Բանկի, Զարտատիրոջ կամ վերջինիս իրավաբանական ներկայացուցչի կողմից: Ապահովագրական հայտային դիմում-հարցաթերթիկը պետք է լրացված լինի Զարտատիրոջ կողմից և ներկայացվի Ապահովագրական ընկերությանը ապահովագրական հայցի գրանցումից 90 (ինսուս) օրվա ընթացքում: Բոլոր պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն բնօրինակով, այլ ոչ թե պատճենահանված:

9.4. Եթե Զարտատիրոջ կամ որևէ այլ անձի կողմից, ով գործում է Զարտատիրոջ անունից, կիրառվում են որևէ գեղծարար միջոցներ կամ սարքավորումներ Պայմաններով սահմանված Ապահովագրական ծածկույթից օգտվելու համար, Զարտատիրոջ՝ Պայմաններով սահմանված բոլոր իրավունքներն անմիջապես չեղյալ են համարվում:

9.5. Եթե Պայմաններով սահմանված Ապահովագրական ծածկույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն տրամադրվում է որևէ այլ ապահովագրական պայմանագրով կամ այլ աղբյուրի միջոցով, ապա Զարտատերն իրավունք ունի ներկայացնել միայն այն ծախսերը, որոնք հատուցման ենթակա չեն նման այլ պայմանագրերով կամ աղբյուրներով:

9.6. Ապահովագրական ընկերությունը կարող է ցանկացած ժամանակ իր սեփական միջոցների հաշվին և առանց Պայմանները խախտելու կատարել քայլեր՝ ապահովագրական պատահարի առաջացման հիմքում ընկած կորստի կամ Մարմնական վնասվածքների գծով Զարտատիրոջ անունից որևէ երրորդ անձից փոխհատուցում կամ երաշխիքներ ստանալու համար:

Մաս 10 Ընդհանուր բացառություններ

Պայմաններով չեն հատուցվում.

10.1. Ծախսեր, որոնց ապահովագրումը առավել յուրահատուկ է կամ հատուցվում է որևէ այլ ապահովագրական պայմանագրով կամ ապահովագրության ազգային ծրագրերով, որոնցից օգտվում է Զարտատերը,

10.2. ցանկացած հայտ, եթե Զարտատիրոջ տարիքը գերազանցել է 76 տարեկանը,

10.3. իրավիճակներ, որոնք առաջացել են կամ որևէ կապ ունեն միտումնավոր սեփական անձին Մարմնական վնասվածքներ կամ Հիվանդություններ պատճառելու, խելագարության հասցնելու, ալկոհոլային կամ թմրանյութերի օգտագործման կամ չարաշահման, ինչպես նաև սեփական անձը միտումնավոր և անկարևոր վտանգի ենթարկելու (բացառությամբ մարդկային կյանք փրկելու փորձի) և ինքնասպանության հետ,

10.4. իրավիճակներ, որտեղ Զարտատերը չի ձեռնարկում որևէ խելամիտ միջոց ինքնապաշտպանության կամ ունեցվածքի պաշտպանության համար,

10.5. որևէ հակաօրինական գործունեություն կամ հակաօրինական գործունեության փորձի իրականացում,

10.6. ցանկացած ծախս, որը կապ ունի որևէ միջուկային զենքի, սարքավորման, քիմիական կամ կենսաբանական գործոնների օգտագործման, տարածման կամ դրանցով սպառնալիքներով հանդես գալու հետ՝ ներառյալ բայց ոչ սահմանափակված ցանկացած ճանապարհով Ահաբեկչական կամ պատերազմային գործողություններին մասնակցության աջակցմանը,

10.7. ցանկացած ծախս, որը միջուկային ռեակցիայի կամ ճառագայթման ուղղակի հետևանք է,

10.8. «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունից բացի ցանկացած այլ երրորդ անձի կողմից մատուցված ծառայությունները, որոնց համար ոչ մի վճար չէր գանձվելու Պայմանները չլինելու դեպքում,

10.9. Պատահարից ավելի քան 90 (ինսուս) օր հետո ներկայացրած հայտերը,

10.10. ցանկացած տիպի օդային թռիչքների մեջ ներգրավված Զարտատերերը՝ բացառությամբ կանոնավոր չվերթներ պատվիրող և ուղեվարձ վճարող կամ լիցենզավորված չարթերային չվերթների մասնակցող ուղևորների,

10.11. ցանկացած պատահարի կամ վնասվածքի հետ կապված ծախսեր, որոնք առաջացել են, երբ Զարտատերը ներգրավված է եղել որևէ վտանգավոր գործունեության՝ հետապնդման, ժամանցի, քարանձավների ուսումնասիրության, ալպինիզմի, ժայռամագլցման, օդապարիկով թռիչքի, էլաստիկ լարերով թռիչքի, դելտապլանիզմի, ջրասուզման՝ օգտագործելով ջրային սաղավարտ օդամուղ սարքավորումով, մարտարվեստի, մոտոցիկլետ վարելու, ավտոարշավների մասնակցելու, ցանկացած տեսակի արագության մրցույթների մասնակցելու (բացառությամբ վազքի), ինչպես նաև ցանկացած տեսակի սպորտային իրադարձության մասնակցության մեջ, որը կազմակերպվել է պրոֆեսիոնալ մակարդակով և ունի հովանավորներ,

10.12. ծախսեր, որոնք առաջացել են ցանկացած տեսակի ձմեռային սպորտաձևում Զարտատիրոջ ներգրավված լինելու հետևանքով,

10.13. ծախսեր, որոնք առաջացել են որևէ ազգի գինված ուժերում ծառայություններ մատուցելու գործընթացում Զարտատիրոջ ներգրավված լինելու պատճառով,

10.14. ծախսեր, որոնք առաջացել են Զարտատիրոջ՝ որևէ պատերազմի

(հայտարարված կամ ոչ), ներխուժման, արտաքին թշնամիների դեմ գործողությունների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմների, ապստամբության, հասարակական կարգերի խախտման կամ հեղափոխության մեջ ակտիվ մասնակցություն ունենալու հետևանքով:

Մաս 11 Զեղծարարություններից ապահովագրություն

11.1. Ապահովագրական ընկերությունը փոխհատուցում է Զարտատիրոջը նրա կրած ֆինանսական վնասների համար, որոնք առաջացել են նրա Զարտի չարտոնված/չլիազորված օգտագործումից՝ Զարտի կորստի, գողության կամ կրկնօրինակման արդյունքում՝ ըստ Պայմանների Յվելված 1-ում նշված սահմանաչափերի՝ պայմանով, որ

- վնասը տեղի է ունեցել Զարտի կորստի կամ գողության մասին Զարտատիրոջ կողմից Բանկին տեղեկացնելուց առաջ 72 ժամվա և տեղեկացումից հետո 168 ժամվա ընթացքում,

- Պայմաններով սահմանված Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում:

11.2. Հատուցումը սահմանափակվում է յուրաքանչյուր Զարտատիրոջ համար երկու հայտով մեկ տարվա ընթացքում:

Պայմաններ

11.3. Զարտի կորուստը, գողությունը կամ կեղծումը կանխելու նպատակով Զարտատերը պետք է ցուցաբերի ողջամիտ զգուշավորություն:

11.4. Զարտատերը պետք է ապահով պահպանի Զարտը, PIN-կոդը և այլ ծածկագրերը:

11.5. Զարտատերը չպետք է ինքնակամ բացահայտի կամ հրապարակի PIN-կոդը այլ անձանց, չգրառի այն այնպես, որ դա հասանելի դառնա այլ անձանց:

11.6. Զարտատերը չպետք է ինքնակամ բացահայտի, հրապարակի կամ գրառի Զարտով գործարքներ կատարելու համար անհրաժեշտ անվտանգության ծածկագրերն ու գաղտնաբառերն այնպես, որ դրանք հասանելի դառնան կամ կարդացվեն այլ անձանց կողմից:

11.7. Եթե Զարտատիրոջ կամ Զարտատիրոջ անունից հանդես եկող որևէ այլ անձի կողմից կիրառվում են որևէ զեղծարար միջոցներ կամ սարքավորումներ Պայմաններով սահմանված ապահովագրական ծառայություններից օգտվելու համար, Զարտատիրոջ՝ Պայմաններով սահմանված որոշ կամ բոլոր իրավունքներն անմիջապես չեղյալ են համարվում:

11.8. Ցանկացած իրադարձության մասին, որը կարող է ապահովագրական հայտի հիմք հանդիսանալ, պետք է ծանուցել Ապահովագրական ընկերությանը: Բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, փաստերը և վկայությունները, որոնք պահանջվում են Ապահովագրական ընկերության կողմից, պետք է վերջինիս տրամադրվեն Բանկի, Զարտատիրոջ կամ վերջինիս իրավաբանական ներկայացուցչի հաշվին: Ապահովագրական հայտային դիմումը պետք է լրացվի Զարտատիրոջ կողմից և ներկայացվի Ապահովագրական ընկերությանը 90 (իննսուն) օրվա ընթացքում: Բոլոր պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն բնօրինակով, այլ ոչ թե պատճենահանված:

11.9. Եթե Պայմաններով սահմանված Ապահովագրական ծածկույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն տրամադրվում է որևէ այլ ապահովագրական պայմանագրով կամ այլ աղբյուրի միջոցով, Զարտատերն իրավունք ունի ներկայացնել միայն այն

ծախսերը, որոնք հատուցման ենթակա չեն նման այլ պայմանագրերով կամ աղբյուրներով:

11.10. Ապահովագրական ընկերությունը կարող է ցանկացած ժամանակ իր սեփական միջոցների հաշվին և առանց Պայմանները խախտելու կատարել քայլեր՝ ապահովագրական Պատահարի առաջանալու հիմքում ընկած կորստի գծով Զարտատիրոջ անունից որևէ երրորդ անձից փոխհատուցում կամ երաշխիքներ ստանալու համար:

11.11. Հատուցումները փոխանցվում են այն հաշվին, որը ենթարկվել է զեղծարարության, եթե հասանելի չի որևէ այլ հաշվեհամար՝ սահմանված Բանկի կողմից:

11.12. Եթե Զարտատերը հատուցում ստանալու հայցով դիմում և փոխհատուցում է ստանում այլ աղբյուրից՝ նվազեցնելով իր զուտ կորուստը, ապա այդ գումարի չափով Ապահովագրական ընկերությանն է վերադարձնում հատուցման գումարը:

Բացառություններ

11.13. Պայմանների շրջանակներում չի հատուցվում որևէ կորուստ, վնաս, հայտեր կամ կանխարգելիչ, վերականգնողական կամ այլ ծախսեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում կամ վերաբերում են.

- տվյալների հաշվարկմանը, համեմատությանը, տարբերակմանը, հաջորդականությանը և մշակմանը, ներառյալ որևէ տվյալների փոփոխություն, ներառյալ նահանջ տարվա հաշվարկները, որևէ համակարգչային համակարգ, սարքավորումներ կամ ծրագրեր և/կամ որևէ միկրոչիպեր կամ այլ նմանատիպ սարքավորումներ՝ համակարգչային կամ ոչ համակարգչային՝ անկախ այն հանգամանքից գույքը ապահովադիրին է, թե ոչ:

- ցանկացած փոփոխություն, վերափոխում, վերաձևակերպում տվյալների հաշվարկում, համեմատություն, տարբերակում, հաջորդականություն և մշակում, ներառյալ որևէ տվյալների փոփոխություն, ներառյալ նահանջ տարվա հաշվարկները, որևէ համակարգչային համակարգ, սարքավորումներ կամ ծրագրերի և/կամ որևէ միկրոչիպեր կամ այլ նմանատիպ սարքավորումներ՝ համակարգչային կամ ոչ համակարգչային՝ անկախ այն հանգամանքից գույքը ապահովագրին և է, թե ոչ:

11.14. 11.13 կետը կիրառելի է անկախ որևէ այլ պատճառի կամ դեպքի, որը նպաստում է կորստի, վնասվածքի, ծախսերի և պահանջների միաժամանակյա կամ որևէ հաջորդականությամբ ի հայտ գալուն:

11.15. Պայմաններով չեն հատուցվում՝

- վնասներ, որոնք առավելագույնս հատուցվում կամ վերականգնվում են Զարտատիրոջ ունեցած որևէ այլ ապահովագրության պայմանագրով կամ ապահովագրական ծրագրերով,
- զեղծարարության պատճառով կրած վնասներ, որոնք տեղի են ունեցել ավելի քան 72 ժամ առաջ մինչ Զարտի կորստի, առևանգման և կրկնօրինակման մասին Բանկին տեղեկացնելը,
- զեղծարարության պատճառով կրած վնասներ, որոնք տեղի են ունեցել Զարտի կորստի, առևանգման և կրկնօրինակման մասին Յաճախորդին տեղեկացնելուն հաջորդող 168 ժամից հետո,
- կորուստներ, որոնք տեղի են ունեցել նախքան Զարտատիրոջ Զարտի ստանալը,
- կորուստներ, որոնք առաջացել են կամ որևէ կերպ կապված են ալկոհոլի, թմրանյութերի կամ դրանց չարաշահման հետ կամ Զարտատերը ճանաչվել է

ալկոհոլից կամ թմրանյութերից կախվածություն ունեցող, եթե Զարտատերը չապացուցի, որ այդ կախվածությունը չի նպաստել Զարտի կորստին,

- հայտեր, որոնք առաջացել են Զարտատիրոջ կողմից Զարտի կորուստը կամ առևանգումը կանխելու նպատակով խելամիտ միջոցներ չձեռնարկելու պատճառով,

- հայտեր, որոնք առաջացել են Զարտատիրոջ կողմից իր Զարտի PIN-կոդը, անվտանգության համարները և/կամ ծածկագրերը անօրինական օգտագործումից պահպանելու նպատակով խելամիտ միջոցներ չձեռնարկելու պատճառով,

- որևէ անօրինական գործողություն կամ անօրինական գործողության փորձի իրականացում,

- պատճառահետևանքային վնաս, եթե այն նշված չէ որպես ապահովագրության հատուկ ծածկույթով ապահովագրված,

- ցանկացած տեսակի ֆինանսական երաշխիք, գրավի կամ վարկային փոխհատուցում:

Զարտատիրոջ պարտավորությունները հայտի դեպքում

11.16. Զարտատիրոջ կողմից հայտի ներկայացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

- Զարտի կորստի կամ գողության մասին պետք է հայտնել տեղական ոստիկանություն և ստանալ Զարտի գողության հանգամանքները մանրամասնող ոստիկանության եզրակացությունը:

- Զարտի կորստի, գողության կամ որևէ զեղծարարության մասին պետք է հայտնել Բանկին որքան հնարավոր է շուտ:

- Հայտի մասին պետք է հաղորդվի Ապահովագրական ընկերությանը՝ նրան ներկայացնելով

լրացված հայտային դիմումը, որին պետք է կցված լինի Զարտատիրոջ հաշվի ջաղվածքի պատճենը, որտեղ նշվում է կեղծ գործարքի մասին, ինչպես նաև նրան պետք է ներկայացվի տեղի ոստիկանության հաշվետվությունը, եթե այդպիսին կա:

- Այն դեպքում, երբ հայցի հավաստիության վերաբերյալ կասկած է ծագում, ապա դրա հավաստիությունն ապացուցելու պատասխանատվությունը դրվում է Զարտատիրոջ վրա:

- Զարտատերը պետք է լիովին համագործակցի Ապահովագրական ընկերության, Բանկի և/կամ տեղի ոստիկանության հետ Զարտի կորստի, առևանգման և զեղծարարության հետ կապված ցանկացած հետաքննության հարցով:

Հայտ ներկայացնելու դեպքում Պայմանների կամ պարտավորության խախտումները իրավունք են տալիս Ապահովագրական ընկերությանը նվազեցնել կամ մերժել հատուցման գումարը

Մաս 12 Շտապ բժշկական և ճանապարհորդական աջակցություն ստանալու կարգը

12.1. Շտապ բուժօգնության կամ ճանապարհորդության աջակցման ծառայությունները հասանելի են ամեն օր՝ 24 ժամ սկզբունքով:

12.2. Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է զանգահարել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկ՝ **(+37410) 31 99 99** հեռախոսահամարով:

Մաս 13. Հայտերի ներկայացման կարգը

13.1. Շտապ բուժօգնության կամ ճանապարհորդության աջակցման

ծառայությունները հասանելի են ամեն օր՝ 24 ժամ սկզբունքով «Ինթերնեյշն ՍՈՍ» ընկերության և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» Բանկի Շուրջօրյա սպասարկման կենտրոնի միջոցով:

13.2. Ապահովագրական բոլոր ծառայություններից օգտվելու անհրաժեշտության առկայության դեպքում պետք է զանգահարել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» Բանկ՝ **(+37410) 319999** հեռախոսահամարով:

13.3. Զարտատիրոջը խորհուրդ է տրվում ուշադիր լինել Ապահովագրության դրույթների և պայմանների ուսումնասիրության գործում, որպեսզի համոզվի, թե տեղի ունեցած միջադեպը ապահովագրվում է ծածկույթով, թե՛ ոչ: Ապրանքագրերի, անդորրագրերի, պաշտոնական հաշվետվությունների և հրապարակումների, տոմսերի, պայմանագրերի և այլ փաստաթղթերի բնօրինակները կամ ընթերցելի պատճենները պահանջվելու են՝ յուրաքանչյուր միջադեպի դեպքում, օժանդակման համար:

13.4. Պատահարի մասին հայտնելուց հետո Զարտատերը պետք է պահանջի հայտային դիմում հարցաթերթիկ, որը լրացված և բոլոր պահանջվող փաստաթղթերի հետ համատեղ պետք է վերադարձվի տրված հասցեով: Հայտ ներկայացնողին խորհուրդ է տրվում պահպանել բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները:

Հավելված 1. Ապահովագրական ծածկույթների, Հատուցման սահմանաչափերի և հատուցվող գումարների աղյուսակ

Ապահովագրական ծածկույթ	Հատուցման սահմանաչափերի և հատուցվող գումարներ՝ ըստ յուրաքանչյուր Զարտի
Բժշկական և ճանապարհորդական աջակցության ծառայություններ	Ներառված է
Գնումների ապահովագրություն ¹	մինչև 2,500 ԱՄՆ դոլար Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ 50 ԱՄՆ դոլար
Չեղծարարություններից ապահովագրություն	մինչև 2,500 ԱՄՆ դոլար

¹ Գնումների ապահովագրության առավելագույն սահմանաչափերն են՝ 1,250 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր իրի համար և 2,500 ԱՄՆ դոլար տարեկան սահմանաչափ՝ յուրաքանչյուր American Express Blue Զարտատիրոջ համար: